

Դ

Չորրորդ պարագային՝ այսինքն բառին սկիզբը և և է չունին ուղղագրական դժուարութիւն, անոնցմէ իւրաքանչիւրը պահելով որոշ ձայն. եգ, երկիւնք: Է՝ բառին սկիզբը չէ այնչափ սովորական, որչափ և. (այս վերջինը սովորական է մանաւանդ ղ և ր գրերուն հետ. իսկ սերիշ գրերու բով կը հանդիպի առհասարակ օտար բառերու մէջ):

ո և օ

Մեր լեզուին մէջ ո և օ իրբեւ ձայնաւոր տառ չեն կրնար գտնուիլ ուրիշ ձայնաւորի բով. այսպիսի պատահում տեղի կ'ունենայ միայն նոր և օտար բառերու մէջ. և այս պարագային սովորաբար կը գրուի օ. գորօր. պօս օձ, իօսաքիմ, և այլն:

Բառին ծայրը բնիկ հայ ձեւն է ոյ և ոչ երբեք ո կամ օ. իսկ նոր և օտար բառերու կամ դաւառական կրճատումներու համար կը գործածուի օ. ինչպէս՝ յետոյ, Աստուծոյ. — Պետօ, ծօ:

Բառին սկիզբը ո գրական լեզուին մէջ կը հնչուի ղօ, իսկ օ պարզապէս օ. ուրեմն այս մասին եւս ուղղագրական դժուարութիւն մը չկայ. — ամէն անգամ որ ղօ ձայնը բառին սկիզբը հանդիպի՝ ո կը գրուի. բացի վոհմակ, վոհոռչ, վոռե բառերէն (ասոնցմէ առաջինն է գործածական. վոհոռչ այժմ կայ միայն վոհոռչ ձեւով. իսկ վոռե՝ հիւսիս, հիւսիսալին հով, կը գրուի նաեւ վօռեաս):

Գարձեալ, ո կամ օ բառի մէջ բաղաձայնի բով նոյն հնչումն ունին. այս մասին կարելի չէ գտնել կանոն մը՝ որ ուղղագրութիւնը դիւրացնէ. որովհետեւ օ-ի ծագումը (առ բաղաձայնի բով) բոլորովին տարբեր է. հետեւաբար միակ միջոցն է մեքենական վարժութիւն:

ՀՐԱԶԵԱՅ 8. ԱՃԱՌԵԱՆ


Ստրասբուրգ, 12 Ապրիլ 1898



ՍՈՐՈՒԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ներկայ յօդուածս գրած է Ռուբէնս Գիւլալ և հրատարակած Ասիական Ամսաթերթի անցեալ տարուան Ժ հասարին մէջ: Հեղինակս բնաբաւականի ընդարձակ տեղեկութիւն տուած ըլլալով ասորական բանաստեղծութեան վերայ, աւելորդ չհամարեցի՝ թարգմանաբար քաղելով՝ հրատարակել զայն, համադրուած լինելով՝ որ ինձ նման հետաքրքիրներ ալ գտնուին այս նիւթիս, և հաճութեամբ կարգան:

Հ. Ե. Ա.



ՍՈՐՈՒԿԱՆ բանաստեղծութեան մէջ պէտք չէ փնտռել ոչ տաղերգութեան (ode) պերճութիւնը և ոչ դիւցազներգութեան անպատշաճ զեղեցիկութիւնը: Զուտ եկեղեցական բանաստեղծութիւն մ'է այն, սկզբնաւորած և զարգացած ի ձեռն կղերական դասուն՝ յաչս որոյ լաւագոյն միջոց մ'էր այս՝ ժողովրդեան մէջ տարածելու կրօնական դաստիարակուիլութիւնը, և միանգամայն տալու կրօնական պաշտամանց՝ պահանջուած շքեղութիւնը:

Ասորական բանաստեղծութիւնն թէ՛ ինքն յինքեան և թէ՛ իւր ամբողջութեամբ նկատուած, զրականութեան ամենէն կարեւոր ճիւղերէն մին է, որով և իւր պատմութիւնն այլ կ'արժէ զրուիլ: Մեր նպատակն է հոս՝ հարեւանցի ակնարկ մի տալ այս պատմութեան վերայ:

Ո՞ր աղբիւրէն առած է արդեօք ասորական բանաստեղծութիւնն իւր ծագումն: Միշտ դժուարին է ծագմանց խնդիրն — երբ խօսքն մարդկային մտաց մշակութեան մասին է — և պէտք է յաճախ ենթադրութեամբք բաւականանալ: Մենք ապահովապէս կարող ենք կցել ասորական չափագիտութիւնը (prosodie) երբայական չափագիտութեան հետ, որոյ հետ նա շատ աղերս ունի: Երկու երկու խմբուած երբայական տուներու (verset) կապակցութիւնը կամ զուգահեռականութիւնն իւր